



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ ԵՐԵՎԱՆԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ԶՕՐ. ՆԵՐՍԵՍ ՆԱԶԱՐԵԱՆԻ

Շաբաթ, Յոկտեմբեր 7-ին երեկոյեան ժամը 7-ին, կազմակերպութեամբ Փասատիսայի Ոստիկանութեան Հայ Համայնքի Խորհրդատու մարմինին, ճաշկերոյթ-հանդիսութիւն մը տեղի պիտի ունենայ, Փասատիսայի Հայ Կեդրոնին մէջ:

Ի նպաստ Երեւանի Ոստիկանութեան կարիքներուն կազմակերպուած այս ձեռնարկը կը հովանաւորէ Փասատիսայի Ոստիկանութիւնը: Ներկայ պիտի ըլլայ Երեւանի ոստիկանապետը՝ Զօր. Ներսէս Նազարեան, որ այս առիթով շրջանս կ'այցելէ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, ընդառաջելով իրեն ուղղուած հրաւերին, ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին փոխանցելու իր օրհնութիւններն ու յաջողութեան մաղթանքները:

PRELATE TO ATTEND A BANQUET HONORING YEREVAN CITY POLICE CHIEF GENERAL NERSES NAZARYAN

On Saturday, October 7, at 7:00 p.m., the Pasadena Armenian Police Advisory Council has organized a fundraising banquet at the Pasadena Armenian Center, to honor Yerevan City Police Chief General Nerses Nazaryan.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will attend the banquet and will convey his blessings and best wishes.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, Յոկտեմբեր 8-ին, մշակոյթի ամսուան առիթով, Օրէնճ Բաուսթիի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, հոգաբարձութիւնն ու Արի Կիրակոս Մինասեան Ազգային Վարժարանի տնօրէնութիւնն ու ծնողա-ուսուցչական մարմինը ձեռնարկած են հայ մշակոյթին նուիրուած տօնախմբութեան մը:

Այս առիթով Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Սուրբ Պատարագ պիտի մատուցանէ Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ եւ յաւուր պատշաճի օրուան պատգամը պիտի փոխանցէ մեր ժողովուրդին:

Ս. Խորանին պիտի սպասարկեն Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Յրանդ Զինյ. Երեցեան:

Արարողութենէն ետք, Առաջնորդ Սրբազանը պիտի կատարէ բացումը գիրքերու ցուցահանդէս վաճառքին, եկեղեցւոյ կից «Ղուկասեան» սրահին մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը որպէսզի ներկայ ըլլայ Ս. Պատարագի հոգեպարար արարողութեան, լսելու Առաջնորդ Սրբազան հօր օրուան խորհուրդը ներկայացնող պատգամը, ինչպէս նաեւ մասնակցելու գիրքերու ցուցահանդէս վաճառքին:

PRELATE TO CONDUCT HOLY MASS AT FORTY MARTYRS CHURCH

In celebration of Armenian cultural month, the Forty Martyrs Pastor, Board of Trustees, and the administration of A.G. Minassian School have organized a book fair to take place on Sunday, October 8.

On this occasion, the Prelate will conduct Holy Mass and deliver the sermon at Forty Martyrs Church. Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Hrant Yeretsian will assist at the altar.

Following church services, the Prelate will preside at the opening of the book fair at “Gugasian” Hall.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԻՈՐԷ ԱՆԱՀԻՏ ՆԵՐՍԻՍԵԱՆԻ ՄԵՆԱՅԱՄԵՐԳԸ

Կիրակի, Յոկտեմբեր 8-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, Կլենտէյլի First United Methodist եկեղեցոյ մէջ տեղի պիտի ունենայ երգչուհի Անահիտ Ներսիսեանի համերգը, նուագախումբի ղեկավարութեամբ՝ Միքայէլ Աւետիսեանի:

Ձեռնարկը կազմակերպուած է երգչուհիին արուեստի գործունեութեան 25-րդ տարեդարձին առիթով եւ կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը եւ ներկայութիւնը: Առաջնորդ Սրբազան Հօր պիտի ընկերանայ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Ղաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

ANAHIT NERSISYAN CONCERT TO BE HELD UNDER THE AUSPICES OF THE PRELATE

On Sunday, October 8, at 7:30 p.m., a concert will take place featuring Soprano Anahit Nersisyan at First United Methodist Church in Glendale.

The concert, held under the auspices of the Prelate, is dedicated to the 25th anniversary of the soprano's singing career. Accompanying the Prelate will be Very Rev. Fr. Barthev Gulumian.

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՍԱՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Ուրբաթ, Յոկտեմբեր 13-ին, երեկոյեան ժամը 7-ին, Յովիտի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ Ս. Թարգմանչաց տօնին առթիւ տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասուն:

Արարողութեան աւարտին, Սրբազան Յայրը օրուան խորհուրդը արտայայտող պատգամ մը պիտի փոխանցէ:

Նախատօնակի արարողութենէն ետք, Ուրբաթ երեկոյեան, Յովիտի Ս. Նահատակաց եկեղեցւոյ «Աւետիսեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի սանուց միութեան տարեկան ձեռնարկը, որ կը վայելէ հովանաւորութիւնը Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան հօր:

Պիտի իրագործուի կոկիկ յայտագիր մը, որուն ընթացքին ներկաները պիտի երգեն Դպրեվանքին նուիրուած երգեր, առիթ պիտի ունենան ունկնդրելու օրուան պատգամաբերը եւ Առաջնորդ Սրբազան Յօր սրտի խօսքը: Երեկոն պիտի խանդավառէ դպրեվանքի նախկին սան Գառնիկ Սարգիսեան, իր «Քնար» նուագախումբով:

Յայտնենք, որ ձեռնարկին հիւրընկալութիւնը ստանձնած են Տէր եւ Տիկին Չօհրապ եւ Լիզա Մանուկեանները:

EVENING SERVICES AND BANQUET TO BE HELD ON THE EVE OF THE FEAST OF THE HOLY TRANSLATORS

On the eve of the Feast of the Holy Translators, evening services will be conducted by the Prelate, with the participation of the Prelacy clergy order, on Friday, October 13, at 7:00 p.m., at Holy Martyrs Church in Encino.

Following church services, the annual banquet of the Seminary of the Holy See of Cilicia will take place at "Avedissian" Hall. The banquet, held under the auspices of the Prelate, is organized by the Seminary Alumni Association.

The sponsors of this year's banquet are Mr. and Mrs. Zohrab and Liza Manoukian.